ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«13» մայիսի 2021թ. N ՄՈ/143-Ա-2021

Ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2021 թվականի մայիսի 10-ի N 08/6533-2021 գրությունը՝ 2021 թվականի մայիսի 27-28-ին Երևան քաղաքում՝ Խաչքարերի պուրակում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախաձեռնությամբ կազմակերպվող «Ճանաչիր Հայաստանը» կարգախոսի ներքո «Մարզերի զբոսաշրջային ներուժը» ներկայացնող զբոսաշրջային միջոցառմանը մարզպետարանի ներկայացուցիչների ակտիվ մասնակցությունը և ներգրավվածությունը ապահովելու նպատակով

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Լ. Մուշեղյան)՝ ապահովել աշխատանքային խումբի կողմից միջոցառման կազմակերպչական աշխատանքների իրականացման ընթացքը և մարզի զբոսաշրջային ներուժը, գաստրո վայրերը, դեռևս քիչ բացահայտված այցելավայրերը, մշակութային գրավչությունները, մարզին բնորոշ փորձառությունները լիարժեք ներկայացնելու ուղղությամբ կատարված աշխատանքների մասին պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա. Հովհաննիսյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Недействительная подпись

VERIFIED OCSP 13.05.2021 16:40:37 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2021 թվականի 13 -ի
N 143-2021 որոշման

ԿԱԶՄ
Աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ՝ Լ. Մուշեղյան

Աշխատանքային խմբի անդամներ՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ՝ Ն. Պետրոսյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Ա. Այվազյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի բաժնի պետ Ա. Թովմասյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ՝ Հ. Վարդանյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի ավագ մասնագետ՝ Հ. Հովհաննիսյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի փորձագետ՝ Շ. Կոստանյան

«Հայ Միասնության Խաչ» բարեգործական մշակութային հասարակական կազմակերպություն հիմնադիր նախագահ՝ /համաձայնությամբ/ Գ. Բաբախանյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**

13.05.2021

VERIFIED OCSP 13.05.2021 12:50:36 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023